

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ «ՄԱՔՏԱՆԸԼՏԾ»-Ի ՌԱՔԱՀԱՐՈՒՄԸ

Նախագահ գործիչ Լահուտ երկվ շարունակեց «Մաքտանըլտծ» ճաշարանի պայթուածին թղթածորին հետապնդումը եւ շեշտեց, որ պէտք է հետապնդումը ըլլայ ընդարձակ՝ յայտնաբերելու համար ոճրային նպատակներ հետապնդող կողմերը, որոնց գործընկերներն կ'օգտուին միայն Լիբանանի թշնամիները եւ անոնք, որոնք կ'աշխատին հարուածել մեր երկրին ապահովական կայունութիւնը:

Նախագահ Լահուտ նշեց, որ պայթուածին ետին գտնուող սեւ ձեռքերը իրենց այս ոճրային արարքներով ծառայութիւններ կը մատուցեն Իսրայէլի, որովհետեւ անոնք լաւատեղեակ են, որ թիրախ դարձող առեւտրական այս կառուցները հարիւր առ հարիւր լիբանանեան են եւ ունին լիբանանցի պաշտօնեաներ եւ յաճախորդներ: «Հետեւեալը միակ տուժող պիտի ըլլայ լիբանանեան ընկերութիւնը, ինչպէս նաեւ Լիբանանի ապահովութիւնը եւ կայունութիւնը», ըսաւ նախագահ Լահուտ:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ իրաքի դէմ ամերիկեցիներին անակազմ պատերազմը դատապարտելու համար կարելի չէ դիմել պայթուածներու եւ յարձակումներու, որոնք կը մրտեն Լիբանանի վարկը:

Նախագահ Լահուտ նշեց, որ լիբանանեան պետութիւնը որեւէ կողմի պիտի չարտօնէ իրաքի դէմ ամերիկեցիներին անակազմ պատերազմը պատճառաբանելով երկրին ապահովութիւնն ու կայունութիւնը խանգարել:

ԺՈՄՊԼԱԹ

ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՄԲ ՍԸ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ ՀԵՏ



Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քորայթեմի մէջ ընդունեց Ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար՝ երեսփոխան Ռալիտ Ժոմպլաթը, որուն ընկերակցեցան գաղթականութեան հարցերու նախարար Մարուան Համատէ, տեղեկատուութեան նախարար Ղալի Արիտի եւ երեսփոխան Պասէմ Սապաա:

Հանդիպումին քննարկուի առարկայ դարձան լիբանանեան ներքին հարցերը, ինչպէս նաեւ շրջանային պարզացումները:

Նշենք, որ վարչապետ Հարիրի ընդունեց նաեւ արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտը:

ՄԱՀԱԶԴ

Հ.Մ.Ը.Մ. Ժուճիէի մասնաճիւղի վարչութիւնը կը գուժէ իր շրջանի անդամներէն

ԵՂԲ. ՆԱԶԱՐ ՍԱՐԱՖԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 6 Ապրիլ 2003ին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Աստղիկ Սարաֆեան եւ դուստրերը՝ Ալին, Հերա եւ Սառա

- Տիկին Նուարդ Սարաֆեան
- Տէր եւ տիկին Յակոբ Սարաֆեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Ալեք Նորչէտեան
- Տէր եւ տիկին Նաչիկ Մալաբեան եւ զաւակունք
- Տիար Նաչիկ Երիբեան
- Տիար Յովիկ Երիբեան
- Չէքեան ընտանիք
- Քէօսէեան ընտանիք
- Կարապետեան ընտանիք
- Երիբեան ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, զաւակին, եղբոր եւ հարազատին՝

ՆԱԶԱՐ ՍԱՐԱՖԵԱՆԻ (Ծնեալ՝ 1950ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 6 Ապրիլ 2003ի առաւօտեան ժամը 10:00ին, սրտի կաթուածի հետեւանքով:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 7 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Ժուճիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, ուրիշ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրոն Երպիթի զբոսայգիին գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ջուք Մուսպէ, Ատոնիս, «Քոգէլի» շէնք, 2րդ յարկ, Երկուշաբթի 7, Երեքշաբթի 8 եւ Չորեքշաբթի 9 Ապրիլին:

«ՄԱՔՏԱՆԸԼՏԾ» ՃԱՇԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՊԱՅԹՈՒՄԸ ՅԱՌԱՋԱՑՈՒՑ ԸՆԴԿՁՈՒՄԻ ԱԼԻՔ ՍԸ

Տորայի «Մաքտանըլտծ» ճաշարանին մէջ Շաբաթ օր տեղի ունեցաւ պայթում մը, որ պատճառեց 6 վիրաւորներ, որոնց չորսը՝ մահուկներ:



Պետական եւ քաղաքական անձնաւորութիւններ ոչ թէ դատապարտեցին պայթումը, վայն նկատելով իրաքի պարակցութեան քայլ, այլ Լիբանանին դէմ ուղղուած արարք մը: Անոնք հարց տուին նաեւ, որ արդեօ՞ք իրաքի դէմ ամերիկեան բռնարարներուն մերժումը կ'ըլլայ յաւելեալ անմեղներու սպանութեամբ:

ՎԱԿԱԶԵՑՈՒԹԻՒՆԵՐ

Խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆրոյլի դատապարտեց պայթումը եւ դիտել տուաւ, որ Լիբանանի մէջ նման ճաշարաններ լիբանանցիներ են եւ ոչ մէկ կապ ունին Միացեալ Նահանգներուն հետ, բացի ճաշարանի անունէն», ըսաւ Ֆրոյլի:

Միւս կողմէ, երեսփոխան Սալահ Հընէյն յայտնեց, որ նման պայթումներ իրաքի պարակցելու ճիշդ ձեւը չէ: Ան պայթումը նկատեց բարբարոս արարք մը, որ կը խաթակաւ տէրերը եւ ներդրողները, ինչպէս նաեւ յաճախորդները լիբանանցիներ են եւ ոչ մէկ կապ ունին Միացեալ Նահանգներուն հետ, բացի ճաշարանի անունէն», ըսաւ Ֆրոյլի:

ԺՈՄՊԼԱԹ ԵՒ ՖՐԵՆԺԻԷ ԲՆՆԱՐԿԵՑԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ, ՇԵՇՏԵԼՈՎ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊԵՏԻՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար՝ երեսփոխան Ռալիտ Ժոմպլաթ շաբաթվերջին Մուխթարայի մէջ ընդունեց առողջապահութեան նախարար Միշնա Ֆրենժիէ, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային վերջին իրադարձութիւնները:

Եւ Մուսուլի քարիւղը, ինչպէս նաեւ Եփրատի ջուրերը տրուին անոր: Ժոմպլաթ դիտել տուաւ, որ արաբական երկիւստութիւնը պէտք է ըլլայ արաբական ազգային սկզբունքներու հիման վրայ: Ֆրենժիէ իր կարգին շեշտեց, որ երկիւստութիւնը անհրաժեշտ է եւ անիկա պէտք է կայանայ երկիւստութեան մասնակցներուն սկզբունքներուն հիման վրայ, հաստատ միասնականութեան մը հասնելու նպատակով:

Միւս կողմէ, շուրջ մէկուկէս ժամուան հանդիպումին ընթացքին, Ժոմպլաթ եւ Ֆրենժիէ խստի դատապարտեցին իրաքի եւ իրաքի ժողովուրդին դէմ ամերիկեցիներին արարած բռնարարները, շեշտելով մարդկային իրաւունքները, ինչպէս նաեւ ազգային ինքնորոշման ու գերիշխանութեան իրաւունքները յարգելու անհրաժեշտութիւնը:

Հանդիպումին ներկայ գտնուեցան նաեւ գաղթականութեան եւ գաղթականներու հարցերու նախարար Մարուան Համատէ, տեղեկատուութեան նախարար Ղալի Արիտի, Ֆրենժիէի խորհրդական Փոլպէ Արայժի եւ երեսփոխան Աբրամ Շրիալէպ:

Միւս կողմէ, շուրջ մէկուկէս ժամուան հանդիպումին ընթացքին, Ժոմպլաթ եւ Ֆրենժիէ խստի դատապարտեցին իրաքի եւ իրաքի ժողովուրդին դէմ ամերիկեցիներին արարած բռնարարները, շեշտելով մարդկային իրաւունքները, ինչպէս նաեւ ազգային ինքնորոշման ու գերիշխանութեան իրաւունքները յարգելու անհրաժեշտութիւնը:

Ֆրենժիէ երէկ ընդունեց Թրիփոլիի միաֆթի շէյխ Թահա Սալունժի: Ներկայ գտնուեցան նաեւ երեսփոխաններ Քայսար Մուսաւատ եւ Ֆայէվ Ղարն:

Ժոմպլաթ շեշտեց, որ 17 Մայիսի մը կրկնութիւնը անկարելի է, նկատել տալով, որ ամերիկեան իշխանութիւնները եւ իրենց գործակալները պիտի դիւրացնեն Իսրայէլի ճանաչման հոլովոյթը եւ պիտի արտօնեն, որ Քերբուքի

Ֆրենժիէ երէկ ընդունեց Թրիփոլիի միաֆթի շէյխ Թահա Սալունժի: Ներկայ գտնուեցան նաեւ երեսփոխաններ Քայսար Մուսաւատ եւ Ֆայէվ Ղարն:

Միւս կողմէ, շուրջ մէկուկէս ժամուան հանդիպումին ընթացքին, Ժոմպլաթ եւ Ֆրենժիէ խստի դատապարտեցին իրաքի եւ իրաքի ժողովուրդին դէմ ամերիկեցիներին արարած բռնարարները, շեշտելով մարդկային իրաւունքները, ինչպէս նաեւ ազգային ինքնորոշման ու գերիշխանութեան իրաւունքները յարգելու անհրաժեշտութիւնը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ

ԿՈՉ

Նկատելով, որ Պորձ Կամուտի Կայ Կարողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը արդէն սկսած է Պորձ Կամուտի «Տըշուէն» Կայ Կարողիկէ գերեզմանատան հողաշէրտերու սեփականագիրները փոխարինել Երեւանի, 2004ի Յունուարի 1էն սկսեալ հին սեփականագիրները չեղեալ պիտի համարուին:

Շտեմբար, կը իրաւորեց այն բոլոր ազգայինները, որոնք վերոյիշու գերեզմանատան մէջ հողաշէրտեր ունին՝ «Վարձու կամ սեփականութիւն», մինչեւ 29 Մայիս 2003 կապ պահեն Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովրդապետութեան հետ՝ յստակացնելու համար իրենց ունեցած հողաշէրտերուն կարգավիճակը:

Վերոյիշու պայմանաժամեւ տեղ, ժողովրդապետութիւնը ոչ մէկ պատասխանատուութիւն կը տանձնէ կատարուելիք նոր դատարաններուն գծով:

Ժողովրդապետութեան Չրասեմեակի ժամերն են՝ կտօն առաջ ժամը 9:00-1:00, իսկ կտօն ետք ժամը 4:00-8:00 Երկուշաբթի մինչեւ Կինգաբաթի: ԸՆՏ. 01-261505:

Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՒՄԻ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԸ

Պորձ Կամուտի մէջ, վաճառատան մը համար վաճառող օրհորը մը: Դիմել՝ հեռ. 01 - 326890:

Տիկին Ալիս Սիւրմեմեան եւ զաւակները՝ Շարի, Ռազմիկ եւ Լուսին, Է: Սիւրմեմեան ընտանիք շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց ամուսնոյն, հօր եւ հարազատին՝ Սեդրակ ՍԻՐՄԵՄԵԱՆԻ մահուան սուգին:

Պորձ Կամուտի մէջ, վաճառատան մը համար վաճառող օրհորը մը: Դիմել՝ հեռ. 01 - 326890:

ՆՇՄԱՐ

ՍԱՏՏԱՄ ՀԻԲՄԵՅՆԻ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

Իրաքի պատերազմէն առաջ ալ կար այն տարածայնութիւնը, թէ Սատտամ Հիւսէյն ունի իրեն նման քանի մը Սատտամներ, թէ անոր թաքստոցը անյայտ է, թէ յայտնի չէ ե՞րբ ան հանրութեան կը ներկայանայ, եւ այսպէս «թէ»երուն շարքը կ'երկարի...

Պատերազմէն ետք, սակայն, այս տարածայնութիւնը դադարեցաւ տարածայնութիւն ըլլալէ եւ ստացաւ պաշտօնական հանգամանք: Աւելի ճիշդ՝ ամերիկեան ղեկավարութիւնը պաշտօնականացուց տարածայնութիւնը:

Ամէն անգամ, որ ամերիկացիք Սատտամի «անհետացման» մասին «տեղեկատուութիւն» կը կատարեն, յաջորդ օրն իսկ առիթով մը Սատտամ կը փաստէ հակառակը: Ամերիկեան պատեղեկատուութիւնը կը շարունակուի, յայտնելով, թէ ցուցադրութիւնը վիտէօ է եւ նոր արձանագրութիւն չէ: Այս պատեղեկատուութեան գլուխ գործոցը, սակայն, կատարուեցաւ անցեալ Ուրբաթ օր, երբ Սատտամ Հիւսէյն Պաղատտի մէջ շրջագայեցաւ, իր ժողովուրդին հետ հանդիպումներ ունեցաւ, անոնց կորովը ամրապնդեց: Ամերիկեան հակապաշտօնութիւնը չուշացաւ. «Ան իրական Սատտամը չէ, այլ անոր կրկնօրինակը, աւելի ճիշդ՝ կրկնօրինակներէն մէկը»:

Ամերիկացիք ի՞նչպէս նման էլոյթներ կ'ունենան, առանց մտածելու, որ նոյն այս պատեղեկատուութիւնը տեղ մը ի վերջոյ իրեն դէմ պիտի դառնայ:

Այսպէս, մարդիկ հարց պիտի տան վաղը, թէ ամերիկացիք, որոնք կը յոխորտան տապալել Սատտամի վարչակարգը ու ձերբակալել վայն, ո՞ր Սատտամը պիտի ձերբակալեն. բո՞ւնը, թէ կրկնօրինակները... Ամերիկացիք պիտի կարենա՞ն պատեղեկատուութիւնը կայաններէն ցուցադրել քանի մը Սատտամ Հիւսէյններ, քով - քովի, կախուած, սպաննուած կամ ձերբակալուած... Այն ատեն միայն հանրային կարծիքը կը համապուրի ամերիկեան «տեղեկատուութեամբ» ու կը դադրի պանոնք պատեղեկատուութիւն նկատելէ:

Մինչ այդ, սակայն, մարդիկ լաւագոյն պարագային կը շարունակեն պատեղեկատուութիւն նկատել ամերիկեան ձախող այս թէյը, իսկ շատեր դիտել կու տան, թէ վերջապէս շատ հողովուրդ այսպէս ըսուած անհեթեթ սատանայապաշտութեան յիմար այս օրերուն արդեօք Սատտամի ուրուակա՞ն է, որ կը թեւսէ ամերիկեան շրջանակներուն մէջ, թէ ինչպէս Նափոլէոն Պոնափարթ կը տառապէր ժոպէֆինի հալածախտէն, Պոլշ ու անոր վարչակարգն ալ կը տառապին Սատտամ Հիւսէյնի հալածախտէն...

ՀՐԱԶ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

● Ամանոսի շրջան, 2 Գնջասեմեակ, հիւրասենեակ, ճաշասենեակ, 2 բաղնիք: Դիմել՝ հեռ. 01-250483 եւ 03-308639:

ԱԶԳԱԿ

Վճարելով «Ազգակ»-ի տարեկան բաժանորդագինը, մեր ընթերցողները օրաթերթին հետ կը ստանան նաեւ «Երկիր» շաբաթաթերթը, ամսական յաւելումներ՝ «Պոտիկ-Մզտիկ»-ը, «Անահիտ»-ը, «Նաւասարդ»-ն ու «Ազգակ» ամսաթերթը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԵՅԷՔ «ԱԶԳԱԿ»-ԻՆ

Ընտանայնեցէ՛ք՝ 01/260115, 01/258526, 01/241274
 Fax : 01/258529
 E-mail: aztag@inco.com.lb
 Website: www.aztagdaily.com

ԱԶԳԱԿ **ԵՐԿԻՐ**

ԱԶԳԱԿ **ՄԷՆԱՆՔ**

ՊՁՏԻԿ-ԱՂՏԻԿ

ԿՈՒՉՈՒԻ

● Պորձ Կամուտի մէջ, վաճառատան մը համար վաճառող օրհորը մը: Դիմել՝ հեռ. 01 - 326890:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՀԱՆՐՕԳՈՒՏ շինությունները և փոխադրությունները հարցերու նախարար Նեմիյա Միքայելի երկխոսությունը, որ շրջանային կացութիւնը մտահոգիչ է, պոլիտեխնիկում, որ յուսախաբութեան վիճակներ ապրիլը նպաստաւոր չէ ներկայ շրջանին:

Միքայել շեշտեց, որ անհրաժեշտ է գիտակցութեամբ ելլալ նախահարցերու մասին, որոնք հարցին եւ այնպէս մը դիտել վայն, որ թերեւս ճակատամարտ մը կրնանք կորսնցնել, բայց ոչ պատերազմ մը:

● ՄՇԱԿՈՅԹԻ նախարար Զաստան Սալամէ պատկերասփիւռի սուրբական կայանին հետ ունեցած մէկ հարցազրոյցին ընթացքին զգուշացուց իսրայէլը՝ իրաքի դէմ ամերիկեան պատերազմը պատճառաբանելով այլ նպատակներ ու թիրախներ իրագործելու քայլերէն: Սալամէ նշեց նաեւ, որ ամերիկեան պատերազմը վարչակազմին եւ իսրայէլեան բռնարարներուն միջև կան ամուր կապեր, նկատելի ունեցնելով, որ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշը կառավարութեան մէջ լիքուտեան ներկայութիւնը ուղադրու է եւ նման մակարդակի ներկայութիւն մը գոյութիւն չէ ունեցած նոյնիսկ նախկին նախագահ Ռոնալտ Ռեյգանի օրերուն: Սալամէ շեշտեց, որ իրանեան դիմադրութիւնը հարաւ մէկ յստակ է եւ աւելցուց, որ անիկա կրցած է ապացուցել իր ամուր գոյութիւնը՝ հարաւ մէկ դուրս քշելով իսրայէլեան ուժերը:

● ՇԻՆՆԵՐՈՒ գերագոյն խորհուրդի փոխ նախագահ միւֆթի շէյխ Ապտիլ Էմիր Քապալան երէկ հարց տուաւ մեծ պետութիւններուն, թէ ինչ է իրենց կեցուածքը ամերիկեան եւ բրիտանական ուժերուն կողմէ իրաքի դէմ իրաքցի կիներուն ու մանուկներուն դէմ գործուող սափեկչութեան մասին: Ան հարց դրաւ նաեւ, թէ ինչու՞ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը ժողով չի գումարել՝ ամբողջ ուժգնութեամբ Ո՛Չ ըսելու պատերազմին:

● ԻՐԱՔԻ դէմ ամերիկեան բռնարարները զաշնակից ուժերուն կողմէ շարունակուող պատերազմին հետ գուզահետաբար բողոքները եւ իրաքցի ժողովուրդին զօրակցութեան բազմաթիւ ձեւերը:

Սալի տաճարի խորհուրդի անդամ Մ. Բեմին վրայ տեղի ունեցաւ խաչահանգիստ - Ջորձիէք «Ս. Աջովն Գրիգորի Լուսաւորչին...»: Վեհափառ հայրապետը յատուկ աղօթքով դիմեց Սուրբին, մասնաւորաբար ըսելով. «Մե-

PHOTO NERSES
(Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ)

ՀԻՄՆԱԳՐՄԱՆ
25 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ
36 photo ֆիլմի
նկարահանումը
միայն 8,000 Լ. Ո.

(Kodak Royal քարտի վրայ տպուած եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ) ... ԵՒ ՍՍՍԵՔ ՆԱԵՒ

Լուսանկարի ցուցակը + ալպոմը + նկարի INDEX մը

Կը նկարենք փոքրերու լուսանկարներ ՉԱՏԿՈՒՄՍ յատուկ յարգարանով

PHOTO NERSES: Պուրճ Ընտուտ, Զաքարյան տարանի փողոց «Սանթրո ԱՐԻՆ»-ի դիմաց: Ըն. 01 - 261858 եւ 01 - 255992

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՑՈՒՑԱՆԿՆԵՐ Ի ՆՊԱՍՏ ՎԱՆԱԹԵՔԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ



Ցուցահանդէսէն անկիւն մը

Արուեստի ճամբով հայ դպրոցին նպաստելու նպատակով ծաւալող նախաձեռնութիւններու շարքին վրայ աւելցաւ նոր ձեւերով մը եւս, երբ Երաբլ, 5 Ապրիլի երեկոյեան ժամը 8:00ին, Վահան Թէքէեան Միջնակարգ վարժարանի «Յ. Պարսամեան» սրահին մէջ տեղի ունեցաւ լիբանանահայ գեղանկարիչներ Ջոհրայ Բիրէճեանի եւ Համբարձում Տատուրեանի գեղանկարչական միացեալ ցուցահանդէսը: Վարժարանին կրթական մարմինին կազմակերպած եւ Հրայր եւ Անահիտ Տանձիկեաններու նախագահութեամբ այս ցուցահանդէսին հասոյթը ամբողջութեամբ կը յատկացուի վարժարանին սաներու ֆոնտին:

Ցուցահանդէսին պաշտօնական բացումէն ետք բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ վարժարանի տնօրէնուհի Ազատուհի Գալստիան: Դրուատելէ ետք վարժարանին վերելքին նպաստող այս նախաձեռնութիւնը, ան շնորհակալութիւն յայտնեց արուեստագէտներուն եւ բոլոր անոնց, որոնք նպաստեցին ձեռնարկին յաջողութեան եւ մաղթեց, որ այս մէկը դառնայ վարակիչ օրինակ:

Ցուցահանդէսը կ'ընդգրկէր Ջոհրայ Բիրէճեանի եւ Համբարձում Տատուրեանի արուեստի սիրողական գործերէն շուրջ յիսուն գեղանկարներ: Զրաներով, անխմտութեամբ ու փաստելով աշխատեցած այս գեղանկարները կը պատկերեն անկեղան բնութիւններ, բնանկարներ եւ գիւղական կեանքէ փրցուած պատկերներ:

Նշենք, որ ցուցահանդէսը շարունակուեցաւ նաեւ Կիրակի, 6 Ապրիլին:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ ՕՐԿՆԱԲԱՇՆ ԱԶԸ...

Շարունակուած Ա. էջէն



(Լուսանկարը՝ ՍԹԻՒՏԻՕ ԱՇՆԱԿԻ)

Սալի տաճարի խորհուրդի անդամ Մ. Բեմին վրայ տեղի ունեցաւ խաչահանգիստ - Ջորձիէք «Ս. Աջովն Գրիգորի Լուսաւորչին...»: Վեհափառ հայրապետը յատուկ աղօթքով դիմեց Սուրբին, մասնաւորաբար ըսելով. «Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիոյի Մայրավանքին մէջ հաւաքուած ուխտաւոր ժողովուրդը: Սրբէ՛ մեր մեղքերը, մաքրէ՛ մեր հոգեկան ու ֆիզիքական ախտերը. առողջութիւն շնորհէ՛ բոլոր հիւանդներուն. յուսաւորէ՛ մեր կեանքի իս-

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ՈՒՆԿՆԳԻՐՆԵՐՈՒՆ

Առաջարկներ ունի՞ք: Նոր գաղափարներ: Զատ լաւ: Զեր ե-մամակները դրկեցէ voicevan@inco.com.lb հասցին:

Arabic header with logos and text: **السفير**, **النصار**, **الديار**, **الاستقبل**, **الاتجار**, **السيرة**

5 Ապրիլի լիբանանեան օրաթերթերը գլխաւորաբար լուսարձակի տակ առած են Սատուան Հիւսէյնի շրջագայութիւնը Պաղտատի փողոցներուն մէջ, «Սատուան» օրակայանին գրաւումը եւ իրաքցիներուն վճարանկարչութիւնը ընդդիմութիւնը շարունակելու:

«Տիար» գրած է, թէ Սատուան մարտահրաւրել կ'ուղղէ Ամերիկայի՝ փողոց իջնելով եւ Պաղտատի մէջ շրջագայելով: «Սատուան» օրակայանը գրաւուեցաւ, իսկ Ուսալիկըն վայն անուանափոխեց «Պաղտատի միջազգային օրակայան»ի: Փառլը հաշտութեան կոչ ուղղեց Ֆրանսայի, իսկ Պէր յայտարարեց, որ Սուրիան է իրանը հարաւանելու օրագիրներ գոյութիւն չունին:

Ըստ թերթին, հանգստեան կոչուած ամերիկացի պիւտուրական մասնագէտի մը նախատեսութեամբ, Պաղտատի ճակատամարտը ամերիկացիներէն պիտի իլէ անուսպն 3 հապար Կոնք եւ վիրաւորներ:

«Լիուս»-ի համաձայն, իրաքի պատերազմին վերաբերելու Պուշի եւ Պէրի միջեւ երրորդ վեհաժողովը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, Հիւսիսային Իրանի մէջ, իսկ Բրիտանիա կը փորձէ հանգստացնել Սուրիան եւ Իրանը:

Պաղտատի մէջ Սատուանի շրջագայութիւնը ցնցում յառաջացուց դաշնակից շարքերուն մէջ: Թերթը գրած է, թէ Սատուան ամերիկացիներուն կը խոստանայ իրաքը վերածել վիթմանի: Մէկ շաբթուան ընթացքին երկրորդ անձնապահական գործողութիւնը արձանագրուեցաւ:

Ըստ «Լիուս»-ի, ամերիկեան - եւրոպական տարակարծութիւնները կը խորանան:

«Մ ու ս ք ա ք ա յ ա յ» նշած է, թէ օրակայանին մէջ 6 ամերիկացիներ սպանուեցան, անձնապահական գործողութիւն մը տեղի ունեցաւ, իսկ Սահաֆ սպանաց հակապետ «արտասովոր» յարձակումով մը: Ըստ թերթին, Թուրքիոյ վարչապետ Էրտողան յայտարարած է, թէ իր կիւր կու լայ, երբ կը տեսնէ իրաքի պատերազմին պատկերները:

«Նահար» օրաթերթը գրած է, թէ պատերազմին յատկացուած վեհաժողովը պիտի կայանայ Պուշի եւ Պէրի միջեւ Երկուշաբթի օր, Պէլֆաթի մէջ, իսկ Փառլը կը փափաքի ապահովել իրաքի վերաշինութեան աշխատանքներուն Ֆրանսայի, Ռուսիոյ, Գերմանիոյ եւ Սուրիոյ մասնակցութիւնը:

Սահաֆ «արտասովոր» հակադարձութեան սպանալիք կ'ուղղէ՝ ողջունելով տարածուեցան Պաղտատի մէջ, երբ էլեկտրականութիւնը անջատուեցաւ Պաղտատէն:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐ. ՎԱՐՄԱՐԱՆ

Սկսած են
2003-2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կրթական յաջող տարեշրջանին համար նորին աշակերտներու արձանագրութիւնները սկսած են Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն վարժարանին մէջ: Արձանագրութեան օրերը՝ Երկուշաբթիէ Ուրբաթ, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ ժամը 1:00, վարժարանի քարտուղարութեան մօտ: Հասցէ. Պուրճ Ընտուտ, Արաքս փողոց: Ըն. 01-260504:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՉԵՐՏԵՍԱԿԵՏԸ ԿԱՐԵՒՈՐ Է

«Վանայ Չայն»-էն ուղղակի ձայնասփռուող շաբաթական յայտագիրը՝

ՏԵՍԱԿԵՏ

Երեքշաբթի, 8 Ապրիլ 2003, կեսօրէ ետք ժամը 5:00ին, Գիւրը՝

ԱՐԴԵՕՔ ԶԵՆՔ ԿՐԱՆ

ԺՐԵԴ ԿՅՅԵՐԷՆ ԽՕՍԻԼ

Կը խօսին՝

ԱՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՐՓԻ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ ՎԻՔԷՆ ԱՒԱԳԵԱՆ

Յայտագիրին ամբողջ տեւողութեան հետաձայնեցէ՛ք «Վանայ Չայն»՝ 01-267657 եւ 01-241199 քիւրուս եւ տուէք ձեր կարծիքը:

ՀԱՏՈՒԿ ԹԴՐԱԿՑՈՒԹԻՒՆ «ԱԶԳԱԿ»-Ի

24 ԱՊՐԻԼԻՆ՝ ԿՈՄԻՏԵԱՍԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ



Վերջապես պիտի իրականանայ փարիզահայերուն քսան տարիներու երազը՝ ունենալ 1915 թուականի եղեռնին նուիրուած յուշարձան մը: Թուրքերը իրենց միջամտութիւններով բազմաթիւ անգամներ խանգարած էին այս յուշարձանին գետեղումը:

2001 թուականին Փարիզի քաղաքապետութեան անդամները միաձայնութեամբ որոշում կը կայացնէին Կոմիտաս Վարդապետի յուշարձանը կանգնեցնել ի յարգանք Ֆրանսայի համար գոհուած հայ զինուորներու եւ 1915ին նահատակուած մէկուկէս միլիոն հայերու:

Կոմիտաս Վարդապետ՝ յօրինող եւ երաժշտագէտ, լաւագոյնս կը խորհրդանշէր հայ ժողովուրդի հոգին, 1915ի զոհերը եւ հայ մշակոյթը: Յուշարձանը պիտի գետեղուի ժան Կուստի հայոց եկեղեցիին եւ Շան զէլիգէի միջեւ գտնուող պուրակի մը մէջ, Սէնի ափին: Պիտի ըլլայ պրոնզէ եւ պիտի ունենայ 4 մետր բարձրութիւն: Պատուանդանին վրայ պիտի գրուի Ֆրանսերէն եւ հայերէն լեզուներով հետեւեալը:

«Ի յարգանք յօրինող եւ երաժշտագէտ Կոմիտաս Վարդապետին եւ 1,500,000 հայերու, գոհուած՝ 20րդ դարու առաջին Ցեղասպանութեան, գործուած՝ Օսմանեան կայսրութեան մէջ»:

Յուշարձանին հեղինակն է Դաւիթ Երեւանցին: Յուշարձանը պիտի խորհրդանշէ երեք նպատակ: Առաջին՝ Կոմիտաս Վարդապետին ընդմէջէն պիտի մատուցուի յարգանք 1915ի հայահառակներուն, երկրորդ՝ մանուկը, որ կու գայ արձանի աջ կողմէն, կը խորհրդանշէ նահատակ հայ ժողովուրդը եւ անոր վերածնունդը: Երրորդ՝ խաչքարը, որուն վրայ յենած է Կոմիտաս Վարդապետին ձեռքը, կը խորհրդանշէ հայ ժողովուրդին մշակութային պատկանելիութիւնը:

Յուշարձանին բացման հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ 24 Ապրիլ 2003ին, Հանրապետութեան նախագահ Ժաք Շիրաքի բարձր հովանաւորութեամբ, Փարիզի քաղաքապետ Պերթրան Տըլանոէի նախագահութեամբ եւ ներկայութեամբ Ֆրանսահայ Միութիւններու Համախմբումի նախագահ Արա Գրիգորեանի եւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Էդուարդ Նալպանտեանի:

Բացումէն առաջ ժողովուրդը Հայոց Ս. Յովհաննու Մկրտիչ եկեղեցու մէջ նախ պիտի մասնակցի նահատակներուն նուիրուած հոգեհանգստեան պաշտօնին, որմէ ետք թափօրը պիտի ուղղուի դէպի Ցաղթանակի կամար՝ ներկայ ըլլալու Անձանօթ Զինուորի յիշատակին աւանդական արարողութեան:

Այս տարի, սովորականին պէս, ժողովուրդը փոխանակ թրքական դեսպանատուն երթալու՝ պիտի հաւաքուի Կոմիտաս Վարդապետի յուշարձանին շուրջ, ուր խօսք պիտի առնէ գրող եւ լրագրող Ժեռար Շալեան: Արձանը պիտի օրհնէ փարիզահայերու առաջնորդ, կաթողիկոսական պատուիրակ՝ Գիւտարք. Նազարեան:

ՀՐԱՅՐ ՀՐԱՉԵԱՆ

Փա րի գ

www.aztagdaily.com

ԱԶԳ. ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒԷԾ
ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲ

ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱԶԱՐ
Կը վաճառուին Զատկուան զարդարանք, խմիչք, Ծաղկազարդի սոմ, շորջա, համադրմ եւ իւրայատուկ ձաշեր եւ անուշեղեններ, ինչպէս նաեւ յուշանուէրներ եւ այլ տեսակի նուէրներ:
Տեղի կ'ունենայ 9, 10 եւ 11 Ապրիլ 2003ին, ժամը 11:00 - 17:00, Սիրան Մանուկեան համալսարանին մէջ:

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒԺՈՎ

ՊԱՇՏԱՎՅՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՌԱՋԱՂԻԵ ՄԱՔՈՒՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ Ի ԽՆԴԻՐ ՄԱՔՈՒՐ ԶՆՈՔԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԻ ԵՒ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Ո՛ւր պէտք է փնտռել Դաշնակցութեան այսօրուան ուժին աղբիւրը եւ ինչո՞ւ մեր կազմակերպութիւնը այս աստիճան ինքնավստահութեամբ լծուած է Հայաստանի Ազգային Ժողովի 25 Մայիս 2003ի ընտրապայքարին:

Դժուար չէ պատասխանը, որովհետեւ յատկապէս այսօրուան Հայաստանի քաղաքական իրականութեան մէջ մեր ժողովուրդը ամէնէն առաջ բարոյական մթնոլորտի առողջացում կը պահանջէ եւ ամէնէն աւելի Դաշնակցութեան մէջ կը տեսնէ բարոյականութեան ներուժը:

Բայց որքան պարզ ու տեսանելի է պատասխանը, նոյնքան եւ աւելիով պարտաւորութեան ու պատասխանատուութեան առջեւ կը դնէ մեր կազմակերպութիւնը՝ բարոյականութեան իր ներուժ կարողականութիւնը արժանաւորապէս դրսեւորելու հրամայականը շեշտելով:

Արդէն կարգախօսի հնչեղութիւն ստացած է հայրենական մամուլի էջերէն ու քաղաքական բեմահարթակներէն յաճախակի բարձրագոյն այն ախտորոշումը, որ մեր պետականութիւնն ու ժողովուրդը ի վիճակի են տրուելու եւ յաղթահարելու քաղաքական, պատերազմական, ընկերային, տնտեսական թէ՛ մշակութային ամէն կարգի դժուարութիւնն ու զրկանք, պայմանաւ սակայն, որ պահպանուի բարոյականութեան շնչելի մթնոլորտը եւ անարդարութիւնն ու չարաշահումները ներքնապէս չկրճեն հայ մարդուն դիմարդկանութիւնն ու կորովը:

Յատկապէս նոր աւերտած Հայաստանի նախագահական ընտրութիւններէն ասդին անհամեմատօրէն շեշտուած է ներքաղաքական առումով բարոյական մթնոլորտը առողջացնելու պահանջը: Ընտրախախտումները խորապէս խոցեցին ընտրազանգուածը, որ իր քուէին եւ ընտրանքին նկատմամբ արդարօրէն յարգանք կը սպասէր բոլորէն, բայց փաստօրէն ակնհայտ եղաւ հակառակին, մասնաւոր քաղաքական մրցակից ճամբարներու մէջ խցիկուած անմաքուր տարրերու կողմէ: Այս վերջինները չարաշահեցին իրենց վստահուած կամ իւրացուցած այլազան լծակները՝ իրր թէ՛ այս կամ այն թեկնածուին յաջողութեան սպասելու համար, սակայն փաստօրէն ոչ միայն արջու ծառայութիւն մատուցեցին իրենց նախընտրած թեկնածուներուն, այլեւ ոտնակոխեցին իրաւունքն ու արժանապատուութիւնը կայացած ընտրազանգուածին:

Բնականաբար առիթը առաւելագոյնս օգտագործել փորձեցին քաղաքական ծախսի շրջանակներ, որոնք հակադաշնակցական իրենց անբուժելի տրամադրութիւններուն յազուրդ տալու նպատակով լծուեցան ընտրախախտումներու պղտոր ջուրին մէջ... ձուկ որսալու քարոզարշաւին Դաշնակցութիւնը ամբողջապէս կարողութիւն թիրախ դարձնելով բարոյական խճրանքի: Մեր ժողովուրդին մօտ Դաշնակցութեան՝ իրեւ բարոյականութեան նախանձախնդիր կուսակցութեան վայելած վստահու-

թեան դրամագլուխը հարուածելու մտասեւեռումով, հակադաշնակցական քարոզչութիւնը ամէն ճիշդ թափեց եւ կը շարունակէ նոյն թափով աշխատիլ, որպէսզի կարենայ թէ՛ նախագահական արդէն աւարտած ընտրութեանց ընթացքին կատարուած ընտրախախտումները եւ թէ՛ խորհրդարանական մօտալուռ ընտրութեանց պարագային անկամ այն ձեւով կայել Դաշնակցութեան:

Անշուշտ գուր են այդ փորձերը, որովհետեւ Դաշնակցութիւնը ինք ղատապարտած է եւ պահանջատէր է, որ օրինականօրէն քողագեծուին ու հաշուետուութեան կանչուին որեւէ կողմէ կատարուած ընտրախախտումներու պատասխանատուները: Բայց հակադաշնակցական ճամբարին համար ճշմարտութիւնը արժէք չունի եւ կարեւոր անհիմն վերադրումներու գնով ընտրազանգուածը ապակողմնորոշելն ու Դաշնակցութիւնը վարկազրկելն է: Նոյն այդ շրջանակներուն համար նաեւ ընտրապայքարի մշակուած ռազմավարութիւն է որեւէ եղանակով վնաս հասցնել Դաշնակցութեան ընտրապայքարի գլխաւոր լծակին՝ Հ. Յ. Դ. բարոյականութեան մասին ընտրազանգուածին մէջ արմատաւորուած համոզումին:

Ահա այս առումներով, մէկ կողմէ մեր ժողովուրդի սպասումներուն արժանաւորապէս ընդառաջելու յանձնառութիւնը, իսկ միւս կողմէ՝ նոյնինքն բարոյականութեան հողի վրայ իր դէմ ծաւալած քարոզարշաւը դիմագրաւելու հաստատակութիւնն են, որ թափ կու տան Դաշնակցութեան ինքնավստահութեան՝ Մայիս 25ի խորհրդարանական ընտրապայքարի նախապատրաստական շախտանքներու ընթացքին: Ի վերջոյ, մեր առջեւ վճռորոշ քննութեան պահ է, մեր պետականութեան եւ ժողովուրդին համար ժողովրդավարական ինքնահաստատման խնդիր է դրուած եւ մեր կուսակցութիւնը կողուած է իր բոլոր ուժերը յարելու, որպէսզի կարենայ առաւելագոյն չափով երաշխաւորել մաքուր ընտրապայքարի կայացումը:

Ինքնանպատակ չէ Դաշնակցութեան ստանձնած այս պայքարը, բայց միայն մաքուր ընտրութիւններու պայմանով կարելի է փայտաշիւ Ազգային Ժողովի բարեյոյս կազմ յառաջացնելու յոյսը: Դաշնակցութիւնը կ'առաջադրէ մաքուր ընտրութիւններով կազմուած եւ բարոյական դրամագլուխով գործող օրէնսդիր իշխանութիւն, որ պէտք է լծուի մաքուր ձեռքերով կառավարման ու տնտեսավարութեան համակարգի հաստատումը օրինականօրէն հունակերելու եւ քաղաքականութեան հակակշռելու իր առաքելութեան:

Այդ դիտանկիւնէն բարացուցական եւ խօսուն է յառաջիկայ Ազգային Ժողովի պատգամաւորութեան համար Դաշնակցութեան ներկայացուցած համամասնական ցուցակը: Իր ընդգրկած դաշնակցական եւ ոչ դաշնակցական թեկնածուներու ծաւալուն պատկերով՝ Հ. Յ. Դ. պատգամաւորա-

կան ցուցակը կ'առաջադրէ Ազգային Ժողովի յառաջիկայ կազմին մէջ ունենալ, այդ ճամբով նաեւ գործադիր իշխանութեան հասցնել քաղաքական բարոյականով մաքուր պատգամաւորներ, ինչպէս նաեւ՝ մաքուր խղճով գործարարութեան հաւատացող եւ այդ ճամբով մեր երկրի ու ժողովուրդի ընկերային-տնտեսական տագնապի յաղթահարման յանձնառու գործիչներ:

Անշուշտ կը գիտակցինք, որ, Հայաստանի պարտադրուած ազատ - շուկայական տնտեսութեան վայրի տեսակի պայմաններուն մէջ, մեծապէս դժուար է գտնել նախ տնտեսավարութեան եւ, ապա, կառավարման համակարգի մէջ մաքուր ձեռքերով եւ խղճմտանքով աշխատելու պատրաստ գործիչներ: Ապա, նման պայմաններու մէջ, միշտ կայ վտանգը, որ իշխանութիւնը եւ դիրքը փորձութեան ու խաթարման մատնեն շատերը:

Ի վերջոյ քաղաքականութիւնը կը պարտադրէ խաղի իր կանոնները, իսկ Դաշնակցութիւնը կը գործէ քաղաքական որոշակի փոստ, ախտավարակ իրականութեան մը մէջ, ուր հարկին տակ է տիրող պայմանները հաշուի առնելու, ըստ այնմ շարժելու եւ հնարաւոր առաւելագոյն բարելաւումին հասնելու իրապաշտութեամբ առաջնորդուելու:

Դաշնակցութիւնը ընտրած է դժուարին ուղի: Մէկ կողմէ բարոյական իրաւունքը չունի ինքն իրեն համար, նոյնիսկ բարոյականութիւնը պահպանելու սիրոյն, փողոսկըրեայ աշտարակ կառուցելու եւ հոն բազմած՝ հանդիսատես կամ խորհրդատու դառնալու, երբ հայոց պետական միակ տունը ամէն կարգի խաթարումներէ եւ այլստերումներէ մաքրելու հրամայականը կը դիմագրաւենք ազգովին: Միւս կողմէ՝ քաղաքական դաշտի վրայ ներգործօն եւ ազդու դերակատարութեան հասնելու իր գորաշարժին ընթացքին իրաւունք չունի թերագնահատելու գործնական այս կամ այն հարկադրանքին տակ իր կողմէ կատարուող շեղումներն ու բացթողումները, որքան ալ աննշան կամ սրբագրելի թուին անոնք, որովհետեւ յատկապէս Դաշնակցութեան մեր ժողովուրդը կը սպասէ բարոյականութեան տէր կանցնող եւ բարոյականութիւն հաստատող քաղաքական ուժի վարքագիծը: Բայց ինչպէս որ ծով մտնող յողորդը չի վախճար թթուութիւն, այնպէս ալ բարոյականութեան տղմուտ քաղաքական այս դաշտին մէջ մաքուր ընտրութիւնները երաշխաւորելու եւ մաքուր ձեռքերով կառավարման ու տնտեսավարութեան հասնելու Դաշնակցութեան պայքարը ուղիղ ճակատէն պէտք է դիմագրաւէ արատաւորման ամէն փորձութիւն:

Իր այդ պայքարին մէջ ինքնավստահ յառաջանալու եւ բաց ճակատով մեր ժողովուրդին ներկայանալու համար Դաշնակցութիւնը ունի կարեւորագոյն գէնքը՝ բարոյականութեան ուժը:

Իսկ իսկ

«Դրօշակ», 2003 Մարտ

ՆԱԽԱԳԻԾԸ ԳՈՐԾՈՎ ՄԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵՆԵՆ ԼԱԻ Է

Կ'ԸՍԷ ԿԻՄ ԲԱԼԱՅԵԱՆ

Ինչպէս նախապէս հաղորդած էինք, Հայաստանի Ազգային Ժողովը Չորեքշաբթի, 2 Ապրիլին, 77 թեր եւ 13 դէմ քուէներով որդեգրեց Հայաստանի նախագահին կողմէ ներկայացուած սահմանադրական բարեփոխումներու նախագիծը: Հայրենի «Հայոց Աշխարհ» օրաթերթը այս առնչութեամբ գրոյցներ ունեցաւ Հայաստանի Ազգային Ժողովի կարգ մը անդամներու հետ, որոնց շարքին՝ Ը. Յ. Դ. պատգամաւորական խմբակցութեան անդամ Կիմ Բալայեանի հետ, որ արտայայտեց հետեւեալ տեսակետները:

Ազգային Ժողովը լուծարելու նախագահի այսօրուան գրեթէ անսահման իրաւասութիւնները եւ սահմանափակուած են շատ որոշակի պարագաներով:

Հ. - Ի՞նչ իմաստով բարեփոխումներու նախագիծը ձեռք չի բաւարարել:

Պ. - Մեր կողմէ ներկայացուած բազմաթիւ առաջարկներ ընդունուած են, սակայն քանի մը սկզբունքային հարցերու մէջ մեր տեսակէտը հաշուի չէ առնուած, եւ ղատելով տրամադրութիւններէն, կը կարծեմ, այսպէս ալ պիտի մնայ: Խօսքը մասնաւորապէս կը վերաբերի պատգամաւորի անձեռնմխելիութեան սահմանափակումին կամ անոր վերացման, ինչպէս մենք կը գտնէինք:

Դժբախտաբար, այս իմաստով կատարուած է հակառակը, անձեռնմխելիութեան աստիճանը աւելի բարձրացած է: Եթէ պատգամաւորը իր կատարած յանցագործութեան համար կրնայ ձեռքազրկուիլ 72 ժամով առանց Ազգային Ժողովի համաձայնութեան եւ միայն կայանքի վերցնելու համար նախաքննական մարմինը պէտք է դիմէ խորհրդարան, ապա նոր նախագիծին մէջ այդ մէկն ալ վերացուած է: Բարեփոխուած տարբերակը կը նախատեսէ, որ ձեռքազրկութեան պարագային ալ պիտի ըլլայ Ազգային Ժողովի համաձայնութիւնը, իսկ եթէ պատգամաւորին կը բռնեն յանցագործութեան վայրը, ապա անմիջապէս պէտք է տեղեկ պահեն Ազգային Ժողովի նախագահին:

Հ. - Զեր ընդհանրական գնահատականը բարեփոխումներու փաթեթին վերաբերեալ:

Պ. - Ցանկալի է, որ աւելի լաւ, կատարելագործուած նախագիծ մը ներկայացուէր՝ իմ կողմէս նշուած հարցերուն դրական լուծումներով: Բայց միեւնոյն ժամանակ պէտք է նշել այն իրողութիւնը, որ ներկայիս գործող սահմանադրութեան համեմատութեամբ, այս նախագիծը լուրջ յառաջընթաց մըն է:

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐԻՉ
(Արեւմտահայերէտի վերածուած)

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՒԱՍՏԻՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՋԵՐԵՆԷ

Ամերիկեան գործելա-
նձին մէջ մամուլը, իրրեւ
բարոզչական միջոց, եր-
կար ժամանակէ ի վեր
բաղադրականութեան կա-
րեւոր լծակներէն մէկը
եղած է: Այս դերակատա-
րութիւնը առաւել շեշտը-
ւած է արտաքին քաղա-
քականութեան մարզին
մէջ, ուր նոյնիսկ վերած-
ւած է Միացեալ Նա-
հանգներու վարած քա-
ղաքականութեան լծոր-
դատեալ շարունակութեան:

Այս հաստատումին վառ
օրինակներէն է Միացեալ
Նահանգներու այն ըն-
թացքը, երբ կը տեսնենք
կատուի առաքելութիւն
ստանձնելով եւ ճշգրտուած նպատակնե-
րու ծառայող բարոզչա-
յատուի քարոզչական հաս-
տատումը, ինչպէս՝
«Ամերիկայի Զայն»-ի
տարբեր խմբագրու-
թիւններու հաստատու-
մը, որուն միակ առաքե-
լութիւնը Մ. Նահանգնե-
րուն վարած քաղաքա-
կանութիւնը քարոզելն
է՝ զայն շղարչելով ազա-
տութեան ու ժողովրդա-
վարութեան երեւութա-
կան ծածկոյթով: Այստեղ
գաղտնիք չէ, որ Միացե-
ալ Նահանգներ այդ
նպատակին յատկացու-
ցած են պատկառելի գու-
մարներ եւ անհրաժեշտ
կրճատումներ կը կատա-
րեն այդ նպատակները
ժամանակավրէպ դառ-
նալու պարագային, ու
այլ տեղ նոր յատկացում-
ներ կը կատարեն ժամա-
նակի պահանջներուն
համաձայն: Այսօր փակ-
ւած են ու մասամբ
կրճատուած Պաշտպա-
տութեան ժամանակնե-
րուն ծնունդ առած քա-
րոզչական միջոցները,
անոնց փոխարին ծնած
են Աֆղանիստանի ու
իրաքի իրադարձութիւն-
ներուն համապատաս-
խան միջոցներ:

Նոյն տրամաբանու-
թիւնը աւելի մեղմ դրսե-
ւորում ունէր պետական
ազդեցութեան զուտ
առանձին քարոզչական
հաստատութիւններու
պարագային: Սակայն
վերջին տարիներուն ջու-
րի երես բարձրացած է
նաեւ քարոզչական այդ
միջոցներուն ուղղոր-
դուած ըլլալու հանգա-
մանը, այս անգամ՝ ազ-
գային անվտանգութեան
թեթիւ դրանքներուն բա-
ցատրութեամբ:

Վերջերս աւելի յաճա-
խակ դարձած է այդ թե-
ւադրանքներէն շեղած,
ազատ կարծիքի կեց-
ւածք ցուցարեւած
լրագրողները քննադա-
տութեան եւ տարբեր
տեսակի պատժամիջոց-
ներու թիրախ դարձնելու
երեւոյթը:

Այս մօտեցումը այն-
քան ծայրահեղութեան
գացած է, որ արտաքին
քաղաքականութեան (եր-
բեմն նոյնիսկ ներքին)
քաղաքականութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Դեռ քանի մը շաբաթ
առաջ «Մի. Պի. Էս» կա-
լութիւնը Մ. Նահանգնե-
րուն վարած քաղաքա-
կանութիւնը քարոզելն
է՝ զայն շղարչելով ազա-
տութեան ու ժողովրդա-
վարութեան երեւութա-
կան ծածկոյթով: Այստեղ
գաղտնիք չէ, որ Միացե-
ալ Նահանգներ այդ
նպատակին յատկացու-
ցած են պատկառելի գու-
մարներ եւ անհրաժեշտ
կրճատումներ կը կատա-
րեն այդ նպատակները
ժամանակավրէպ դառ-
նալու պարագային, ու
այլ տեղ նոր յատկացում-
ներ կը կատարեն ժամա-
նակի պահանջներուն
համաձայն: Այսօր փակ-
ւած են ու մասամբ
կրճատուած Պաշտպա-
տութեան ժամանակնե-
րուն ծնունդ առած քա-
րոզչական միջոցները,
անոնց փոխարին ծնած
են Աֆղանիստանի ու
իրաքի իրադարձութիւն-
ներուն համապատաս-
խան միջոցներ:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

Պաշտպանութեան
ուղղուած որեւէ քննա-
դատութիւն ոչ հարեւա-
պիտութիւն կը որակուի:

ՀԱՅՐԵՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՇՔԱՆՇԱՆ՝ ՄԱՐԳՐԻՏ ԹԵՐՁԵԱՆԻ

Պուլկարական գրականութիւնը հայ ընթերցողին
ներկայացնելու գործին մէջ մեծ դերակատարութիւն
ունի հայրենի թարգմանիչ Մարգարիտ Թերզեան, որ
չուրը կէս դարու ժամանակամիջոցի մը ընթացքին
թարգմանած է պուլկարացի տասնեակ մը հեղինակ-
ներու ստեղծագործութիւնները:

Այս անուրանալի աշխատանքին համար վերջերս
Պուլկարիոյ նախագահին մէջ հրամանագրով Մար-
գարիտ Թերզեան պարգեւատրուած է պուլկարական
«Մատարեան հեծեալի առաջին աստիճանի» պետա-
կան բարձրագոյն շքանշանով:

24 Մարտին Հայաստանի մէջ Պուլկարիոյ դեսպա-
նատան մէջ տեղի ունեցաւ շքանշանի յանձնման
արարողութիւնը, որուն բացումը կատարեց Հայաս-
տանի մէջ Պուլկարիոյ ժամանակաւոր հաստատա-
տար Իվան Իվանչեւ: Յանձնելով շքանշանը՝ ան նշեց,
որ Մ. Թերզեան Հայաստանի քաղաքացիներէն առա-
ջինն է, որ կ'արժանանայ այսպիսի պատիւի մը:

Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լե-
ւոն Անանեան եւ թարգմանիչ Մարգարիտ Թերզեան
իրենց խօսքերուն մէջ նշեցին այն մեծ դերը, որ վեր-
ջին երեք տարիներուն հաւատարմատար Իվանչեւ
խաղացած է հայ - պուլկարական մշակութային յա-
րաբերութիւններու ամրապնդման ասպարէզին մէջ:

Այս առիթով խօսք առաւ նաեւ Հայաստանի ար-
տաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, որ
Հայաստանի կառավարութեան եւ արտաքին գործոց
նախարարութեան անունով շնորհակտութեան Մ. Թերզե-
անը՝ պուլկարական բարձրագոյն պարգեւին արժա-
նանալուն համար: Հանդիսութեան ներկայ էին դիւա-
նագէտներ, պետական գործիչներ, գրողներ, արուես-
տագէտներ եւ լրագրողներ:

ՆՈՐ ՇՐՈՒՄԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐ

«ՄԵՐՉԱՒՈՐ ԵՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՐԿԻՐՆԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻՆ ԶԻՐԳ ՀԱՏՈՐԸ

Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադե-
միայի արեւելագիտութեան բաժանմունքի գիտական
խորհուրդին որոշումով վերջերս հրատարակուած է
«Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկիրներ եւ ժողո-
վուրդներ» մատենաշարին 21րդ հատորը:

Խմբագրական խորհուրդին անդամներն են՝ Վ. Հ.
Բալթուրդեան, Ն. Վ. Յարութիւնեան, Ն. Հ. Յովհան-
նիսեան (նախագահ), Պ. Ա. Չոպանեան, Ռ. Ա. Սաֆ-
րաստեան: Հատորը կը բաղկանայ շուրջ 400 էջերէ
եւ կը ներառէ տարբեր սերունդներու պատկանող
հայ արեւելագէտներու աշխատանքները: Աշխարհա-
գրական - տարածքային իմաստով այս աշխատանք-
ները կ'ընդգրկեն արարական Արեւելքը, Իրանը,
Թուրքիան, քրիստոնէական արեւելքը եւ Հին Արե-
ւելքը:

Նիւթի իմաստով հաւաքածոյին յօդուածները կ'ար-
ծարձեն հին շրջանի, միջին դարերու, նոր եւ նորա-
գոյն պատմութեան, քաղաքականութեան, միջազգա-
յին եւ շրջանային յարաբերութիւններու, գրականու-
թեան, արուեստի, լեզուաբանութեան եւ յարակից այլ
հարցեր:

Հատորը կը նախատեսուի արեւելագէտներու, միջազ-
գայնագէտներու, պատմաբաններու, մշակոյթի հարցերով
գրողներու, ինչպէս նաեւ բարձրագոյն ուսումնական
հաստատութիւններու ուսանողներու համար:

«ԱՎԱ ԵՎԱՒ, ԱՎԱ ԳՆԱՅ, ԳՈՒՔ ԳԻՏԷՔ, ԹԵ ՈՎ»

Վարսենիկ Պետրոսեան Մինասեանի թարգմանու-
թեամբ Երեւանի մէջ հրատարակուած է համաշխար-
հային ճանաչման արժանացած ամերիկահայ գրող
Ուիլիամ Մարոյեանի «Ահա եկաւ, ահա գնաց, դուք գի-
տէք, թէ ով» ինքնակենսագրական հատորը:

176 էջերէ բաղկացած թարգմանական այս դիր-
քին յառաջաբանին մէջ թարգմանիչը կը յայտնէ, թէ
հատորը կը յատկանշուի իր սարոյեանական ինքնա-
տիպ ոճով, արտայայտչական տարօրինակ հիւսուած-
քով, եւ թէ՛ եւ զրուած է լեզուի ու խօսքի առօրեայ
պարզութեամբ, բայց լեցուն է խոր ու ներհուս փիլի-
սոփայութեամբ:

Թարգմանիչը՝ Վարսենիկ Պետրոսեան - Մինասեան
(1913 - 2002) ծնած է Իրան: Յաճախ է թաւրիզի
«Հայկազեան - Թամարեան» եւ թեմական կեդրոնա-
կան դպրոցները: 1942ին՝ Իրանի հայկական դպրոց-
ներու վերաբացումէն ետք, երկար տարիներ պաշտօ-
նավարած է իբրեւ հայերէնի դաստատու: Վ. Պետրոսե-
ան - Մինասեան անգլերէն սորված է յաճախելով
Թեհրանի անգլիական դպրոցը: Ունի անտիպ այլ
թարգմանութիւններ եւս:

ՄԱՆԿԱՊԱՍԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՔԱՄԸ

26 Մարտին Հայաստանի Գրողներու Միութեան
տան դահլիճին մէջ սկսաւ մանկական գիրքի եւ գրա-
կանութեան հանրապետական շարաթիւր: Երկար ժա-
մանակէ ի վեր մոռցուած այս անանդութիւնը վերա-
կանգնած է վերջին տարիներուն ընթացքին: Հայաս-
տանի վարչապետին աջակցութեամբ եւ հովանաւո-
րութեամբ, Հայաստանի Գրողներու Միութիւնը եւ
Հրատարակչական Գործակալութիւնը այս շարքի
կը կազմակերպեն Հայաստանի կրթութեան եւ գի-
տութեան նախարարութեան, Երեւանի քաղաքապե-
տարանի եւ գրադարաններու հետ:

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան
նշեց, որ մանկապատանեկան գրականութեան զբեր-
անգնահատելի է ժողովուրդի պատմութեան մէջ: Վար-
չապետին կարծիքով, մանկագիրներուն ստեղծագոր-
ծութիւնները ունին իրենց սպառողները ի դէմս հայ
փոքրիկներուն, եւ անհրաժեշտ է աճող սերունդը դաս-
տիարակել ոչ միայն իբրեւ կիրթ, ազգային ակունքնե-
րը ճանչցող մարդիկ, այլեւ՝ պետութեան քաղաքացիներ:
Ան նաեւ տեղեկացուց, որ այս տարուան պետական
պիտոնէն զիտահրատարակուած համար, յատկաց-
ւած է 105 միլիոն դրամ, որուն 25 միլիոնը՝ մանկապա-
տանեկան գրականութեան համար, իսկ յաջորդ տարի
յատկացումը պիտի աւելնայ:

Լստ Հայաստանի Գրողներու Միութեան նախա-
գահ Լեւոն Անանեանի, այս տարի պիտի հրատարակ-
ւի մանկապատանեկան 50 գիրք, իսկ յառաջիկայ
տարուան համար Հայաստանի Գրողներու Միութեան
հրատարակչութիւնը տպագրութեան կը նախապատ-
րաստէ «Իմ առաջին գիրք» մատենաշարը, ուր
ընդգրկուած են հայ դասական հեղինակներուն գոր-
ծերը՝ ամէնէն կրտսեր ընթերցողներուն համար:

ՄԱՎ՝ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ԼՐԱԳՐՈՂ ԷՏՈՒԱՐՏ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆԻ

80 տարեկան հասակին մահացաւ հայ լրագրական
ընտանիքի աւագ սերունդի ներկայացուցիչ էտուարտ
Շահնազարեան, Համաշխարհային Բ. Պատերազմին
մասնակցելէ եւ անոր ընթացքին վիրաւորուած տուն
վերադառնալէ ետք, ան կը լծուի լրագրութեան
գիտարար ասպարէզին: 1947ին մինչեւ 1991, գրեթէ կէս
դար, ան աշխատած է «Արմէնփրէս» լրատու գործա-
կալութեան մէջ՝ սկիզբը իբրեւ թղթակից, խմբագիր
եւ բաժնի վարիչ, ապա մօտ երկու տասնամեակ՝ պա-
տասխանատու քարտուղար:

Է. Շահնազարեան մեծ վաստակ ունի Հայաստա-
նի կեանքը հայրենի եւ արտասահմանեան մամուլին
մէջ յաւուր պատշաճի ներկայացնելու, այլ գործա-
կալութիւններու հետ կապեր հաստատելու եւ այդ
կապերը զարգացնելու գործին մէջ: Անոր աշխատան-
քը արժանացած է պետական կառավարական բարձր
գնահատականներու, մետալներու, պատուոգիրնե-
րու: Ան նաեւ արժանացած է Հայաստանի վաստա-
կաւոր լրագրողի կոչման:

ՖՐԱՆՍԱՍՈՒԹԵԱՆ ՄԻԶԱԶՈՒՅԻՆ ՕՐՈՒԱՆ ՆՈՒԻՐՈՒԹՅ ԶԵՆԱՐԿՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՉ ՖՐԱՆՍԱՅԻ ԳԵՍՊԱՆԻ ԳԻՐԲԻՆ ՆՈՒԻՐՈՒԹՅ ՇՆՈՐՀԱՎԱՆԳԵՍ

Ամէն տարի, 20 Մարտին, ամբողջ Ֆրանսիայի աշ-
խարհը կը նշէ Ֆրանսիասօսութեան միջազգային օրը:
Այս առիթով Հայաստանի մէջ տեղի ունեցող ձեռ-
նարկներուն շրջագիծին մէջ Երեւանի Վ. Բրիտտովի
անուան օտար լեզուներու համալսարանին մէջ ու-
սանողութեան հետ հանդիպում ունեցաւ Հայաստա-
նի մէջ Ֆրանսայի դեսպան Հանրի Գիւնի, որ ներկա-
յացուց իր «Երջանկութիւն ամէն տեսակի» գիրքը:
Ֆրանսերէն եւ հայերէն լեզուներով հրատարակուած
գիրքին մէջ ամփոփուած են Հանրի Գիւնիի 24 փոք-
րիկ գրութիւնները՝ երջանկութեան հասկացողու-
թեան վերաբերեալ:

Երջանկութեան մասին գրողին մտորումները
բազմապիսի են, եւ հեղինակը դիտարկած է այդ հաս-
կացողութեան տարբեր արտայայտութիւնները մար-
դու կեանքին մէջ:

Հատորին նախարանին մէջ Ֆրանսայի դեսպանը
բանաստեղծական գմայանքով կը խօսի Հայաստա-
նի մասին եւ հայ երիտասարդներուն կը պատգամէ,
որ անոնք տակաւին երկիր ունին կառուցելիք եւ
իրենց երջանկութեան լոյսին պէս մշակեն հողը: «ԶՖ»
որ այս երկիրը տակաւին կրնայ երջանիկ ըլլալ, կը
հաւատէ դեսպան Գիւնի:

ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՖՐԱՆՍԵՐԵՆԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԵՐԵՎԱՆԻՆ 20 ԳՐՈՒՅԱԿԱՆՆԵՐՈՒ

2001-2002 կրթական տարեշրջանի Ֆրանսերէնի
խորացած ուսուցումով Երեւանի դպրոցներու 20
աշակերտներ ստացան Հայաստանի կրթութեան եւ
գիտութեան նախարարութեան Հայաստանի մէջ
Ֆրանսայի դեսպանատան կնիքներով վկայականներ,
որոնք կը փաստեն, որ անոնք լաւապէս կը տիրապե-
տեն Ֆրանսերէնին:

Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպան Հանրի
Գիւնիի համաձայն, այդ վկայականները շրջանա-
ւարտներուն կարելիութիւն կ'ընձեռեն Ֆրանսայի
մէջ որեւէ համալսարան ընդունուելու պարագային
չենթարկուել Ֆրանսերէնի քննութեան: Վկայական-
ները շրջանաւարտներուն յանձնեցին Հայաստանի
կրթութեան եւ գիտութեան փոխ նախարար Այստա-
նի

Աշակուբայի Էջ

ՔԱՆԱՏԱԿԱՅ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԱԳԵՏԵՆԵՐ


ԿԱՐԷՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Անցնող ամսուան կտերուց, գործի բերուով, շաբաթով մը այցելեցինք Սոմրեալ: Գիտինք, թէ քանատահայ բազմաթիւ կերպարուեստագետներ ունեինք հոն, բայց չէինք գիտեր, թէ անոնց մէջ կային իսկական տաղանդներ: Ժամանակի անբաւարարութիւնը եւ սաստիկ ցուրտին պատճառով քիչերով միայն կրցանք հանդիպիլ հոն, որոնց մասին պարբերաբար պիտի կերակայանանք, մնացելները վերապահելով այլ առիթի:

Շատ չեն այն կերպարուեստագէտները, որոնք առանց տարուելու եւ տուրք տալու ժամանակի ճաշակին եւ պահանջներուն, կը ստեղծագործեն ճամանակները իրենց ներքին ճանի թելադրանքներով: Այդ քիչերէն է Կարէն Պետրոսեան, որ իր արուեստով կրցած է վարկ ապահովել օտար արուեստագետ շրջանակներու մէջ:

Ծնած է 1952ին Հայաստան: Մասնագիտական կրթութիւնը ստացած է նախ Երեւանի Գեղարուեստական Ուսումնարանի մէջ 1968 - 1971, եւ ապա մասնագիտանալու համար 1971ին մեկնած է Ս. Փեթերսպորթ, ուր ընդունուած է Գեղարուեստի Բարձրագոյն Հիմնարկը, գորաւարտած է 1977ին:

Կարէն Պետրոսեան ցարդ կազմակերպած է տասներկու անհատական ցուցահանդէսներ, Բանաստեղծի եւ Միացեալ Նահանգներու տարբեր քաղաքներու մէջ, ինչպէս նաեւ մասնակցած է տասէ աւելի խմբակային



ասպերացականութեան եւ բացարձակ վերացականութեան միջեւ: Անոր շօշափած թեմաները գերծ են մակերեսային դատումներէ եւ արտաքին պնդանքներէ: Ան ոչ միայն խորհուրդներու «երգիչն» է, այլեւ կը



ցուցահանդէսներու՝ Բանաստեղծի, Գերմանիոյ, Ճափոնի, Հոլանտայի եւ եւրոպական այլ քաղաքներու մէջ: Անոր գործերը մնայուն ցուցադրութեան արժանացած են չուրջ տասնեակ մը թանկարժեքներու եւ արուեստի կեդրոններու մէջ: Այս տարբեր լեզուամտածողութեան եւ ինքնազարմանքի եւ արուեստի կեդրոններու մէջ: Այս տարբեր լեզուամտածողութեան եւ ինքնազարմանքի եւ արուեստի կեդրոններու մէջ:

ուսովեացականութեան եւ բացարձակ վերացականութեան միջեւ: Անոր շօշափած թեմաները գերծ են մակերեսային դատումներէ եւ արտաքին պնդանքներէ: Ան ոչ միայն խորհուրդներու «երգիչն» է, այլեւ կը

ուսովեացականութեան եւ բացարձակ վերացականութեան միջեւ: Անոր շօշափած թեմաները գերծ են մակերեսային դատումներէ եւ արտաքին պնդանքներէ: Ան ոչ միայն խորհուրդներու «երգիչն» է, այլեւ կը

ուսովեացականութեան եւ բացարձակ վերացականութեան միջեւ: Անոր շօշափած թեմաները գերծ են մակերեսային դատումներէ եւ արտաքին պնդանքներէ: Ան ոչ միայն խորհուրդներու «երգիչն» է, այլեւ կը

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԿՐՈՒԹԵԱՆ

«Ազգային» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէ կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեան պարագային՝ մասխրոտաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգային» ծանուցումներու գրասենեակը:

ՆԱԽՆԱԳԻՐԵԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Ժամանակակից արուեստը ըմբռնելու եւ մեկնաբանելու համար անհրաժեշտ է սերտել նաեւ մախնադարեան մշակոյթը: Զարմանալիորէն հարուստ է Հայկական Բարձրամակարձ մշակոյթը, ուր կարելի է հանդիպիլ հայկական խորհրդանշաններու եւ գարդանաշխերու բազմաթիւ նախամուշններու: Ստորեւ կ'արտատպենք ակնարկ մը Հայաստանի մախնադարեան մշակոյթի մասին հայրենի մամուլէն, ընդհանուր գաղափար մը տալու համար:

Մարդկային հասարակութեան պատմութեան առաջին փուլը եղել է հին քարէ դարը՝ փալեոլիթը: Այդ ժամանակներից պահպանուել են մարդու բնականութեան վայրերը՝ կայանները եւ բաւականին կատարեալ մշակուած քարէ գործիքները:

Եւրոպական մի քանի խոշոր գիտնականներ մինչեւ ի. դարու սկիզբը պնդում էին, թէ Հայաստանը հնագոյն ժամանակներում ունեցել է այնպիսի բնակչութեան պայմաններ, որոնք բացառում էին մարդու բնականութիւնը այնտեղ հին քարէ դարէ ստորին կամ վաղագոյն շրջանում, հետեւաբար՝ եւ այդ դարաշրջանի բնակավայրեր, եւ քարէ գործիքներ որոնքը Հայաստանում գուր եւ անիմաստ էին համարում: Այդ տեսակէտն այնքան էր արմատացած, որ Ֆրանսիացի նշանաւոր հնագէտ Փաբ տը Մորկանը դեռեւս 1900ական թուականներին Հայաստանում իր իսկ յայտնաբերած ստորին (վաղ) քարէ դարի գործիքները վերագրեց աւելի ուշ ժամանակների՝ վերին քարէ դարին: Մակայն 1940 - 50ական թուականներին Ս. Մարդարեանը եւ ուրիշները յայտնաբերեցին հին քարէ դարեան կայաններ եւ մեծ թիւով գործիքներ: Դրանց ուսումնասիրութիւնը ցոյց տուեց, որ նախնադարեան մարդը Հայաստանում բնակուել է հին քարէ դարի վաղ փուլերից սկսած եւ թողել է իր մշակոյթի, այսպէս կոչուած քարի մշակման եւ արտադրութեան վերին աստիճանի հարուստ եւ առատ հետքեր: Աւելին՝ պարզուեց, որ հին քարէ դարը Հայաստանում իր ինքնատիպութեամբ հանդերձ կապակցող օղակ է եղել Մերձաւոր Արեւելքի եւ հիւսիսի քարէ դարեան մշակոյթի միջեւ:

Վերջին տարիների ձեռնարկուեց նաեւ հին քարէ դարեան քարանձաւների ուսումնասիրութիւնը Հրազդանի կիճուում՝ Երեւանի մօտ եւ գետի հոսանքն ի վեր՝ Լուսակերտ գիւղի մօտ: Արդիւնքների աւելի քան զոհացուցիչ են. բաւական է ասել, որ Երեւանի մօտ մի փոքրիկ քարանձաւում Բ. Երիցեանի ղեկավարութեամբ կատարուող պեղումների շնորհիւ յայտնաբերել են շուրջ 20 հազար քարէ գործիքներ, բուսական եւ կենդանական մնացորդներ, որոնք վերաբերում են, այսպէս կոչուած, մուստյէի դարաշրջանին եւ 40 - 25 հազար տարուան հասակ ունեն:

Հայաստանի հնագէտները կանգնած են քարայրներում հին քարէ դարեան մարդու մնացորդների յայտնաբերման շեմին: Քարայրներից մէկում արդէն գտնուել են նախնադարեան մարդու ոսկրային մնացորդներ եւ մի առամ:

Նախնադարեան մարդն իր գոյութիւնը պահպանելու համար որսում էր կենդանիներ, ձուկ, հաւաքում ընդդէմ, արմտիք, պտուղներ, սեւեռի բոյսեր, բանաբներ, այսինքն նա դեռեւս չէր վարում - ցանում կամ անասուններ բուժում եւ իր ապրուստի միջոցները վերցնում էր բնութիւնից պատրաստի վիճակում՝ վարում էր որսորդական եւ հաւաքչական տնտեսութիւն: Այդ պատճառով էլ մարդկային հասարակութեան զարգացումն ընթանում էր ծայր աստիճան դանդաղ: Դա տեւեց աւելի քան մէկ միլիոն տարի: Դրութիւնն արմատապէս փոխուեց նոր քարէ դարի ժամանակաշրջանում, երբ մարդիկ ընտելացրելով անասուններ եւ պարապելով բրնձային երկրագործութեամբ մեզային 10 - 7 հազար տարի առաջ արդէն արտադրում էին իրենց կեանքի նիւթական միջոցներն ու պայմանները: Մարդկային հասարակութեան կեանքում կատարուեց առաջնութեան նշանակութիւն ունեցող խոշոր յեղաշրջում՝ այսպէս կոչուող «Նեոլիթեան» (նոր քարէ դարեան) յեղափոխութիւնը:

Անասնապահական եւ երկրագործական արտադրութեան կազմակերպումը նպաստեց աշխատանքային գործիքների կատարելագործմանը, դուռ բացեց նորանոր որոնումների եւ նախապատրաստեց անցումը քարի հետ միասին նաեւ մետաղի՝ պղնձի օգտագործման դարաշրջանին, որն ընդունուած է կոչել պղնձի քարէ դար կամ ԵՆԵՈԼիթի դարաշրջան: Առաջին մետաղի կիրառութիւնը հասարակութեան պատմական առաջնութեան եւ հեռանկարի իմաստով խոշոր նշանակութիւն ունեցաւ: Այդ դարաշրջանի յուշարձան յայտնաբերուել է Արարատեան դաշտում՝ Թեղուտ բնակավայրում, հնագէտ Ռ. Թորոսեանի կատարած պեղումների շնորհիւ: Այստեղ էլ, Հայաստանում առաջին անգամ, յայտնաբերուել է պղնձի օգտագործումը՝ միջնդեղի խառնուրդով:

Հայկական լեռնաշխարհի բնիկները լեռներում՝ քարայրի վրայ, փորագրել են անթիւ - անհամար ժայռապատկերներ, որոնք անդրաբարձրում են նրանց որսորդական եւ անասնապահական կեանքի ու կենցաղի տարբեր կողմերը, մանաւանդ՝ նրանց առասպելաբանական, աստղաբաշխական պատկերացումներն ու ըմբռնումները հազարաւոր տարիներ մեզանից առաջ: Այդ ժայռապատկերները միեւնոյն ժամանակ նախնադարեան մարդու վաղագոյն, բայց եւ հարուստ ու բազմակողմանի արուեստի նշանաւոր յուշարձաններ են:

Հազարաւոր ժայռապատկերների յայտնաբերումը Արագածի լանջերին (Ա. Քալանթար), Գեղամայ լեռներում (Ս. Պետրոսեան, Ս. Մարդարեան, Հ. Մարտիրոսեան), Սիւնեաց լեռներում (Գ. Կարախանեան, Պ. Սաֆեան) հայ հնագիտութեան խոշոր յաջողութիւն-

ներից մէկը եղաւ: Երկրագործական եւ անասնապահական տնտեսութեան զարգացումը նշանաւորուեց անցումով վաղ պրոնզի դարաշրջանին: Այս դարաշրջանի առաջին նշանակալից յուշարձանը՝ Շէնգաւիթը, բացուեց Երեւան քաղաքի հարւս - արեւմտեան թաղամասում՝ ի. Բայրուրդեանի, հետագայում Ս. Մարդարեանի պեղումների շնորհիւ: Այս բազմաշերտ եւ պարսպով շրջափակուած բնակավայրում բացուել են շրջանաձեւ եւ քառանկիւնի յատակագծերով բնակարաններ ու տնտեսական շինութիւններ, ցորենի եւ դարու մնացորդներ, պաշտամունքային օճախներ, արձանիկներ եւ այլն:

Այս հնագոյն ժամանակներում Հայաստանում պրոնզը պատրաստուած էր դերազանցապէս պղնձի հետ միջնդեղի խառնուրդով (ինչպէս պարզուած է Ա. Գեորգեանի ուսումնասիրութիւններով), իսկ միջին պրոնզի դարաշրջանում, այսինքն Ն. Ք. երկրորդ հազարամեակի առաջին կէտում, լայն կիրառութիւն է ստանում անագային պրոնզը, որի շնորհիւ տեղի է ունենում արհեստագիտական զգալի առաջադիմութիւն, կատարելագործուած են գործիքներն ու զէնքերը: Ընդարձակուած են նաեւ միջնդեղային կապերը, փորձի եւ նիւթական արժէքների փոխանակութիւնը, որը տեղի է ունենում ոչ միայն Հայկական լեռնաշխարհի բնիկ ցեղերի եւ ցեղախմբերի միջեւ, այլեւ՝ հարեւան երկրների հետ:

Այս ժամանակաշրջանում նախնադարեան հասարակութեան մէջ խորանում են ինչքային տարբերութիւնները եւ ընկերային շերտաւորումը: Տոհմացեղային աւագանին զգալի հարստութիւնների է կուտակուած է իշխող դիրք ձեռք բերում: Ն. Ք. երկրորդ հազարամեակի կէտերին Հայաստանում առաջանում են ցեղային խոշոր միութիւններ՝ իրենց մշտական ուղղակի կապերով, աւագանիով եւ առաջնորդներով, որոնց հարեւան խմբերը թաղաւոր են անուանում:

Ն. Ք. երկրորդ հազարամեակի 2րդ կէտն ընդգրկում է զարգացած կամ ուշ պրոնզի դարաշրջանը, իսկ նրա վերջերից՝ երկաթի մշակոյթի իւրացման վաղ ժամանակները, որը նախնադարեան հասարակութիւնը վերջնականապէս քայքայում է: Հասարակութեան տարբեր խմբերի ինչքային եւ ընկերային անհասարակութիւնն աւելի է խորանում, առաջանում է ռազմական ժողովրդավարութիւնը, երեւան է Գեղարուեստական ստրկութիւնը եւ մարդու շահագործումը մարդու կողմից: Այսպիսով, նախապատրաստուած է անցումը դասակարգային հասարակութեան եւ պետականութեան դարաշրջանին:

